

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄՓՎ 2015թ. -Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարոն գնդապետ, հարգելի սպաներ, տիկնայք և պարոնայք.

Հաշվետու ժամանակահատվածում Շիրակի ՄՓՎ գործունեությունն ուղղված է եղել քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը:

Գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝

վարչության, փրկարարական և հրշեջ փրկարարական ջոկատների անձնակազմերի մարտունակության, մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացումը.

- ոլորտին վերաբերվող իրավական ակտերի իմացության ապահովումը.
- ԱԻ կանխման, հետևանքների վերացման և դեպքերի օպերատիվ արձագանքումը.
- արտակարգ իրավիճակներում մարզի բնակչության վարվելակերպի կանոնների իրագրելիության բարձրացումը.
- կառավարման մարմինների, կազմակերպությունների, օպերատիվ ծառայությունների հետ համագործակցության բարձրացումը:

2015թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գրանցվել է՝

571 արտակարգ դեպք (2014թ.՝ 543), որոնց հետևանքով զոհվել է՝ 32 (2014թ.՝ 45), վիրավորվել՝ 368 մարդ (2014թ.՝ 388):

Այսպիսով, 2015թ. -ի ընթացքում մարզում 2014թ. համեմատությամբ գրանցված արտակարգ դեպքերի թիվը աճել է 28-ով, (5.1%-ով) զոհերի թիվը նվազել է 13-ով (28.8%-ով), իսկ վիրավորների թիվը նվազել է 20-ով (5.1%-ով):

Գրանցված դեպքերից՝

412-ը՝ տեխնածին են, (2014թ.՝ 387դեպք), որոնց հետևանքով զոհվել է 22 մարդ, (2014թ.՝ 39 մարդ), վիրավորվել՝ 235 մարդ, (2014թ.՝ 253 մարդ): Տեխնածին բնույթի արտակարգ դեպքերը աճել է 25 դեպքով կամ 6.4 %-ով, զոհերի թիվը նվազել է 17 -ով, կամ 43.5 %-ով, վիրավորներինը՝ նվազել է 18-ով, կամ 5,1% -ով:

Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 236-ը հրդեհի դեպքերն են (2014թ.՝ 206), հրդեհների թիվը մարզում աճել է 30-ով, կամ (14.5%-ով): Հրդեհների հետևանքով զոհվել է 4 մարդ (2014թ.՝ 6), վիրավորվել՝ 0 մարդ (2014թ.՝ 6): Հրդեհների հետևանքով զոհերի թիվը նվազել է 2-ով, կամ (33.3%-ով) վիրավորներինը՝ նվազել է 6-ով, կամ (100%-ով):

Հրդեհների գերակշռող մասը արձանագրվել է խոտածածկ տարածքներում՝ 84 դեպք և կազմել է ընդհանուր դեպքերի 35.6%-ը, իսկ բնակելի հատվածում՝ 50 դեպք և կազմել է 21.2%:

Նվազել են ճՏՊ-ի թիվը – 165 (2014թ.–171) դեպքերի թիվը նվազել են՝ 6-ով կամ 3.5%-ով, զոհերի թիվը՝ 18, (2014թ.–32) նվազել է 14-ով կամ 12.5%-ով, վիրավորներինը՝ 235 (2014թ.–239) նվազել է 4-ով կամ 1.7%-ով:

- **տեխնածին բնույթի ԱԻ-ից նյութական վնասը կազմել է՝** 76 մլն. 213 հազ. 741 դրամ - (2014թ.– 86 մլն. 841 հազ. 496 դրամ): Նյութական վնասը նվազել է՝ 12.2 % կամ 10 մլն. 627 հազ. 755 դրամով:

- **32-ը՝ տարերային բնույթի են** (2014թ.՝ 24դեպք), զոհեր և վիրավորներ չկան:

- կարկտահարությունից և ուժեղ քամուց տուժել են թվով 60 համայնք, նյութական վնասը կազմել է 798 մլն. 620 հազ. 450 դրամ (2014թ.– տուժել են թվով 57 համայնք, 12652.6 հա. գյուղ. մշակաբույսեր, նյութական վնասը կազմել է 3 մլրդ. 359 մլն. 572 հազար 336 դրամ): Նյութական վնասը նվազել է՝ 76.2 %-ով կամ 2 մլրդ. 560 մլն. 951 հազ. 886 դրամով:

- ձնաբուր 7 դեպք (2014թ.՝ 10դեպք), դեպքերի թիվը նվազել է 30%-ով, տարահանվել է թվով 214 մեքենա և 496 ուղևոր (2014թ.՝ 41 մեքենա և 103 ուղևոր):

- **127-ը՝ սոցիալ-կենցաղային են** (2014թ.՝ 132դեպք), զոհեր՝ 10, (2014թ.՝ 6), վիրավորվել՝ 133 մարդ (2014թ.՝ 135): Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերը նվազել են 5-ով (3,7%):

Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերից վիրավորների թիվը նվազել է՝ 2-ով, կամ 1.4%-ով, զոհերի թիվը աճել է՝ 4-ով, կամ 66.6%-ով:

Նշված 127 դեպքից 26-ը շնու գազից թունավորում, (2014թ.–27): Ավելացել են թունավորման դեպքերը դեղորայքից 41 դեպք, (2014թ.–33), սննդից՝ 7 դեպք, (2014թ.–4), ավիոհոյից՝ 25 դեպք, (2014թ.–27):

Նվազել են թունավորման դեպքերը քիմիական նյութերից՝ 11 դեպք (2014թ.–24), իսկ ջրահեղման դեպքեր չեն արձանագրվել:

Ընդհանուր առմամբ ԱԻ-ներից պատճառած նյութական վնասը կազմել է՝

874 մլն. 834հազ 191 դրամ) (2014թ. – 3 մլրդ. 446մլն. 413հազ. 832 դրամ):

Նյութական վնասը նվազել է՝ 74.6 % կամ 2 մլրդ. 571 մլն. 579 հազ. 641 դրամով:

1.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐԶԱԿԱՆՔՈՒՄ

Վարչությունն իր իրավասության սահմաններում արձագանքել է մարզում արձանագրված ԱԻ դեպքերին

- ժամանակին իրականացրել է մարզում արձանագրված հրդեհների հրդեհաշիջման աշխատանքները, հաշվետու ժամանակահատվածում ամենաշատ հրդեհներ մարվել են Գյումրիի ՀՓՁ կողմից – 134 (2014թ-129), աճել է 3,9 %-ով Ախուրյանի ՀՓՁ- 36 (2014թ- 26), աճել է 38.5 %-ով, Արթիկի ՀՓՁ- 39 (2014թ-20), աճել է 95 %-ով , Անիի ՀՓՁ- 15 (2014թ- 13), աճել է 15.4 %-ով, Աշոցքի ՀՓՁ- 3 (2014թ-8) նվազել է 62.5 %-ով, Ամասիայի ՀՓՁ- 10 (2014թ- 9) աճել է 11 %-ով.
- կենցաղային կանչերի արձագանքում՝ Գյումրիի ՀՓՁ – 201, Արթիկի ՀՓՁ- 16, Անիի ՀՓՁ - 7, Ախուրյանի ՀՓՁ - 5, Ամասիայի ՀՓՁ – 29, Աշոցքի ՀՓՁ- 8 :
- Ինչպես նաև ՄՓՎ-ի կողմից արձագանքվել է հետևյալ այլ բնույթի ահազանգերին՝ կանչ առանց հրդեհի-46, փակ դուռ – 155, տեղեկատվության փոխանցում – 85, արգելափակված մեքենայի դուրս բերում – 66, օգնություն քաղաքացուն- 36, ճՏՊ – 38, սպառնացող վտանգի վերացում – 13, ինքնասպանության փորձ - 6, օձի հայտնաբերման կանչ – 20, օգնություն կենդանիներին - 11, հոգեբանական խորհրդատվություն - 1, կեղծ կանչ - 5, դժբախտ պատահար- 1:
- ՀՀ Շիրակի մարզպետարանում ձևավորված հանձնաժողովի կազմում Շիրակի ՄՓՎ ծառայողները մասնակցել են մարզի համայնքներում արձանագրված կարկտահարության հետևանքների գնահատման աշխատանքներին:

**2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏԻՎ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

- Հաշվետու ժամանակահատվածում բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել է անցկացվել են ՇՈՒ-ներ, օբյեկտային վարժանքներ: Վարժանքները ընդգրկել են ինչպես քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտի հիմնարար հարցերը, այնպես էլ մարզի ԲՊ համակարգի օպերատիվ նախապատրաստման խնդիրները:
- Յուրաքանչյուր ամիս կազմվել է ՕԿԿ է ներկայացվել վարչության ամսական աշխատանքային պլանները, ամսական հիմնական միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվությունները, պարբերաբար ներկայացվել է ստորաբաժանումների անձնակազմի ազդարարման սինեմաները և հավաքի գրաֆիկները:
- 03-04.03.15թ. մարզի ուսումնական հաստատություններում Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կողմից ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ անցկացվել է՝ օբյեկտային վարժանքներ - «Պատասպարման կազմակերպումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում» թեմայով (Գյումրու թիվ 21 միջնակարգ դպրոցում անցկացված օբյեկտային վարժանքը տեսաձայնագրվել է և ներկայացվել ՓՕ ՕԿԿ) դասախոսություններ - «ՔՊ միջազգային կազմակերպության ստեղծման պատմությունը» թեմայով
- 08-09.09.15թ. մարզի ուսումնական հաստատություններում Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կողմից ԱԲ աշխատակցի օրվա կապակցությամբ անցկացվել է՝ օբյեկտային վարժանքներ - «Տարահանման միջոցառումների կազմակերպումը «Տագնապ» ազդանշանի դեպքում» թեմայով (Գյումրու թիվ 15 միջնակարգ դպրոցում անցկացված օբյեկտային վարժանքը տեսաձայնագրվել է և ներկայացվել ՓՕ ՕԿԿ) դասախոսություններ - «ԱԲ գործառնությունները և խնդիրները բնակչության պաշտպանության բնագավառում» թեմայով
- **Ուսումնական հաստատությունների տնօրինությունների խնդրանքով անցկացված դասախոսություններ՝**
 - «Տարերային և տեխնածին աղետների առաջացման պատճառները, դրանցից պաշտպանվելու կանոնները» թեմայով (թիվ 20, 26 միջնակարգ դպրոցներ)
 - «Տուժածներին ցուցաբերվող առաջին բուժօգնություն» թեմայով (մանկավարժական քոլեջում)
- Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական համայնքներում անցկացվել են թվով 30 շտաբային ուսումնավարժություն՝ <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի, սելավի սպառնալիքի և երկրաշարժի դեպքում>> թեմաներով:
- 21.05.2015 թվականին ՄՓՎ-ն մասնակցել է մարզպետարանում անցկացված աշխատանքային խմբերի հետ շտաբային մարզումների:
- 10.06.15թ. ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ անցկացվել է շտաբային ուսումնավարժություն՝ «Սառնաղբյուրի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով :
- Հունիսի 17-18 մարզում անցկացվել է «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն:
- 26-28.08.2015թ. Շիրակի ՄՓՎ-ն մասնակցել է ՈՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպումը հակառակորդի հարձակման դեպքում ը թեմայով ՇՈՒ-ին:
- 03-06.09.2015թ. Շիրակի ՄՓՎ-ն մասնակցել է «ՀՀ ՏԿ և ԱԲ նախարարության անձնակազմի գործողությունները ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման դեպքում» թեմայով ՀՀՈՒ-ին և ՀՀ ՊՆ կողմից անցկացված Ո Շանթ – 2015 Ո հրամանատարաշտաբային գորավարժությանը:
- 10.12.2015թ. ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ անցկացվել է շտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:
- Մարզի թվով 1 կազմակերպությունում անցկացվել է ցուցադրական իսկ 6-ում՝ հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: ՄՓՎ կողմից գործնական և մեթոդական օգնություն է ցույց տրվել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման ընթացքում:
- Գյումրիի զինվորական կոմիսարիատում գորահավաքային պատրաստության ուղղությամբ իրականացվել է կցագրված անձնակազմի և տեխնիկայի ուսումնասիրում (առանձին պլանով)
- Փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներն անցկացվել են յուրաքանչյուր ամիս 1 օր՝ վեց ուսումնական ժամ տևողությամբ (թվով 28 թեմաներ):
- Վարչության անձնակազմի ինքնուրույն պատրաստության պարապմունքները իրականացվել են յուրաքանչյուր շաբաթ 4-ական ժամ տևողությամբ, իսկ ֆիզիկական պատրաստության պարապմունքները՝ ամիսը 2 օր, 2-ական ժամով:
- Յուրաքանչյուր ամիս ենթակա ստորաբաժանումներում անցկացվում է շաբաթից պատրաստության պարապմունքներ:
- Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրերի շրջանակներում՝ Շիրակի ՄՓՎ-ի և Գյումրու ՀՓՁ-ի բազայի հիման վրա ստեղծվել է ՈՇՊԿԿ թաղաքային որոնողափրկարարական միջին թիմը:
- Մարտի 22-27-ը և նոյեմբերի 10-13-ը Գյումրիում անցկացվել են վարժանք և կառավարման դասընթացներ՝ համակողմանի ապահովման, OSSOCC-ի բազայի և փրկարարական մեթոդների վերաբերյալ :
- Հունիսի 17-18-ին մարզում անցկացված ՀՀՈՒ-ին ներգրավվել է նաև «Շիրակ» ՔՈՓ թիմը:
- Մարզում ստեղծվել է թվով 42 հրշեջ փրկարարական թիմեր, որոնցում ընդգրկված են թվով 539 բարձր դասարանի աշակերտներ:
- 15.04.2015թվականին Երևանում անցկացված պատանի հրշեջ-փրկարարների հանրապետական առաջնությունում՝ մարզի պատանի հրշեջ- փրկարարական թիմը զբաղեցրել է երրորդ պատվավոր տեղը:
- Անցկացվել է ստուգաբք՝ «ՀՀ ՏԿԱԲՆ ՓՕ ստորաբաժանումների ուժերն ու միջոցները հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին ներգրավման հրահանգ»-ի իմացության վերաբերյալ:
- Մարտի 20-ից 21-ը ՇՄՓՎ պետը և տեղակալը մասնակցել են Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից Շիրակի մարզում 2010թ-ից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի շրջանակներում Օաղակառուում անցկացված սեմինարին:
- ՀՀ ՏԿԱԲ նախարարի 09.11.2015թ.թիվ 1171-Ա հրամանով ա/թ-ի նոյեմբերի 18-20-ը ՇՄՓՎ պետը Թբիլիսիում մասնակցել է Կարմիր խաչի կողմից կազմակերպված տարածաշրջանային ամփոփիչ հանդիպմանը.
- ՄՓՎ, ՀՓՁ-ների հրամանատարների տեղակալները, հերթափոխի պետերը մասնակցել են ԿՎՊԱ-ում անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

3.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

- Համաձայն շտապ զեկույցների հաշվետախտակի ձևերի, ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՔՊՄԿ վարչություն է ներկայացվել՝
 - տեղեկություններ մարզի կազմակերպություններում առկա ՔՊ գույքի վերաբերյալ,
 - տեղեկություններ ՔՊ գորահավաքային պահուստի գույքի գույքագրման վերաբերյալ,
 - ամփոփագիր մարզի ՔՊ կազմավորումների, դրանց անձնակազմի թվաքանակի և հազեցվածության վերաբերյալ,
 - ՀՀ Շիրակի մարզի բնակչության պատասպարման հաշվարկը,
 - տեղեկություններ մարզում առկա ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների վերաբերյալ: /Մարզում առկա 32 ապաստարաններից կապիտալ վերանորոգման ենթակա է - 13-ը, մասնակի վերանորոգման – 6-ը, դուրս գրման – 13-ը/:
- Ճշգրտվել են տեղեկությունները մարզում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ավտոմոբիլային ճանապարհների և դրանք սպասարկող կազմակերպությունների, էլեկտրահաղորդման ցանցերի և գծերի, գազամատակարարման գծերի և օբյեկտների, առկա ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և կառուցվածքների վերաբերյալ:
- ավարտվել է համայնքների ղեկավարների կողմից ՀՀ Շիրակի մարզի համայնքների տեղեկագրերի, սահմանամերձ գոտու համայնքների տարահանման պլանների լրամշակման գործընթացը:
- համաձայն 2015թ-ի հրամանատարական պատրաստության պարամունքների անցկացման տարեկան թեմատիկ-պլանի, ՀՀ Շիրակի մարզպետարանում Շիրակի մարզային փրկարարական վարչության ԲՊ բաժնի կողմից անցկացվել են հրամանատարական պատրաստության պարամունքներ՝ ԱԻ և ՔՊ որոշուր կարգավորող թեմաներով:
- ՇՄՓՎ կողմից իրականացվել է մարզի ՀՀԹ-րի ՔՊ տեսանկյունից պիտանելիության վիճակի ուսումնասիրման և ուսումնասիրման արդյունքում համապատասխան ակտերի կազմման աշխատանքները:

4.ԿԱՊԻ ԵՎ ԱԶՂԱՐԱՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Կապը մարզում Շիրակի ՄՓՎ կողմից իրականացվում է քաղաքային, բջջային հեռախոսակապով, ինչպես նաև թվով 12 ստացիոնար, 50 դյուրակիր և 17 շարժական ռադիոկապի միջոցներով: Ներկայումս, մարտկոցների շարքից դուրս գալու պատճառով չեն աշխատում դյուրակիր թվով 6 ռադիոկապի միջոցներ:
- Մարզում բնակչության ազդարարումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է 167 հատ էլեկտրաշչակ, առկա է՝ 53 հատ, պակասում է 114 հատ էլեկտրաշչակ (Մ-40 կամ LD-800), <<Ա>> բլոկ անհրաժեշտ է 167 հատ, առկա է 31-ը, որից սարքին է 17-ը, անսարք՝ 14-ը, անհրաժեշտ է ևս 143 հատ:

5.ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

- Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման, հետեւանքների նվազեցման ուղղությամբ պարբերաբար իրականացվում են հետևյալ միջոցառումները.
- Մշտական հսկողություն է սահմանված մարզի քիմիական վտանգավոր օբյեկտներում առկա ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի և պահպանման նկատմամբ:
 - Քիմիական վտանգավոր նյութերից՝ քլոր է օգտագործում «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ, ջրամատակարարման և կոյուղու ցանցի վարակազերծման նպատակով, ամսական օգտագործվող քլորի միջին քանակը՝ 1.5տ.:
 - Մշտական հսկողություն է սահմանված մարզի քիմիական վտանգավոր օբյեկտի անվտանգության վկայագրում ընդգրկված ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ:
 - Մարզում համաճարակային իրավիճակը բնակչության շրջանում և անասնախամաճարակային իրավիճակը հաշվետու ժամանակահատվածում եղել է հանդարտ և վերահսկելի, իսկ օդի աղտոտվածությունը, միջինը՝ կազմել է 0.26մգ./մ³, ճառագայթային ֆոնը, միջինը՝ 15մկո./ժ.
 - Ձմեռային ժամանակահատվածում մշտական ուշադրության կենտրոնում է եղել մարզի ճանապարհներին տիրող իրավիճակը, վարչության կողմից ՋԼՄ-րի միջոցով, բնակչությունը միշտ իրազեկված է եղել եղանակային փոփոխություններին և ճանապարհներին տիրող իրավիճակին: Ճանապարհներին արտակարգ դժբախտ դեպքերի կանխարգելման նպատակով մշտական պատրաստ վիճակում է պահվել ճանապարհները սպասարկող կազմակերպությունների ինժեներական տեխնիկան և անձնակազմը:
 - Գարնանային վարարումների և սելավների ռիսկերից մարզի տարածքի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու համար, անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների կատարման նպատակով, ուսումնասիրվել է մարզի գետերի հունների և սելավատարների վտանգավոր հատվածները:
 - ՇՄՓՎ կողմից կազմվել է մարզի տարածքում 2015 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիրը, որտեղ համայնքների ղեկավարները ներկայացրել են իրենց կողմից 2015 թվականի ընթացքում իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումները: Համաձայն այդ ծրագրի, հեղեղված ժամանակահատվածում սելավատարների հունների մաքրման աշխատանքներ են նախատեսվել և իրականացվել Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներում, Ախուրյանի տարածաշրջանի 17 համայնքներում, Անիի տարածաշրջանի 8, Արթիկի տարածաշրջանի 22, Ամասիայի տարածաշրջանի 11, Աշոցքի տարածաշրջանի 10 համայնքներում: Գյումրի համայնքում՝ սելավատարի հունի մաքրում 300մ երկարությամբ, Արթիկում – 530մ, Մարալիկում – 700մ, Ախուրյանում – 450մ, Ազատանում – 2000մ, Աշոցքում և Ամասիայում – 500 կական մետր:
 - Պլանավորված միջոցառումներից բացի, պլանից դուրս՝ մայիս ամսվա ընթացքում Առափի, Լուսակերտ, Մեծ Մանթաշ, Բենիամին համայնքապետարանների կողմից իրականացվել են սելավատարների հունների մաքրման աշխատանքներ 3700 մ ընդհանուր երկարությամբ, իսկ հունիս ամսվա ընթացքում՝ Շիրակ, Հայրենյաց, Զիթհանքով, Բանդիվան, Սահապետավան, Գոգհովիտ համայնքապետարանների կողմից իրականացվել են սելավատարների հունների մաքրման աշխատանքներ 2550 մ ընդհանուր երկարությամբ:
 - Կապված ապրիլի – 9-ից – 11-ը հանրապետության տարածքում բարձր ջերմային ֆոնի հետ, հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով, մարզային իշխանությունները և համայնքների ղեկավարները Շիրակի ՄՓՎ կողմից տեղեկացվել են ջերմաստիճանի հնարավոր բարձրացման մասին և համայնքների ղեկավարների կողմից իրականացվել են հնարավոր կանխարգելիչ միջոցառումներ մինչև ապրիլի 15-ը:
 - 09 – 15.04.2015թ.-ի ընթացքում մարզի տարածքում ջերմաստիճանի կտրուկ բարձրացման հետևանքով հեղեղումներ և ափամերձ տարածքների ողողումներ չեն արձանագրվել:
 - Շիրակի մարզում գործող ճանապարհաշինարարական, վերանորոգման և սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակներում գործելու պլանների մշակման և կազմման գործընթացը ավարտված է:

6.ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՇԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում ամենօրյա աշխատանքներ են իրականացվել փրկարարական ուժերի և տեխնիկայի մշտական մարտական պատրաստականության պահպանման ուղղությամբ:

Հաշվետու տարում հրշեջ-փրկարարական ջոկատներում, հրդեհավտանգ և կարևորագույն օբյեկտներում անցկացվել են հատուկ-տակտիկական ուսումնավարժություններ, ինչպես նաև կազմակերպվել և անցկացվել են հրշեջ ավտոմեքենաների շահագործման վերաբերյալ դասընթացներ:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար ստուգվել են մարզի հրշեջ-փրկարարական ջոկատների, փրկարարական ջոկատի ծառայության կրման ընթացքը: Հսկողություն է իրականացվել հրշեջ ավտոմեքենաների շահագործման և ելքերի գրանցման նկատմամբ:

- Մայիսի 19-ին Շիրակի ՄՓՎ-ում, Ախուրյանի թիվ 53,Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ներում անցկացվել է «Երեխաների խոցելի խմբի մասնագիտության կողմնորոշման աջակցություն» ծրագրի շրջանակներում Գյումրու թիվ 3 խնամքի հաստատություններից ընդգրկված 70 երեխաների շրջաց:
- Հունիսի 24-ին Շիրակի մարզի Կապա համայնքում անցկացվել է Շիրակի մարզում հիմնված «Համայնքային արձագանքման» կամավորական 18 թիմերի դաշտային ուսումնավարժանք:
- Գյումրու Տուն-ինտերնատ ՊՈԱԿ-ում անցկացվել է վարժանք «Աշխատակիցների և շահառուների տարահանումը հրդեհի դեպքում» թեմայով: ՄՓՎ-ի կողմից իրականացվել է մեթոդական օգնության ցուցաբերում և մասնակցություն վարժանքի անցկացմանը:

- Յուրաքանչյուր եռամսյակ ՀՓՁ-ի կողմից՝ ըստ սպասարկման տարածքների անցկացվել են հատուկ տակտիկական ուսումնավարժություններ մարզի կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում՝

- Գյումրու ՀՓՁ – «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը» թեմայով
 - «Ծերերի տուն ինտերնատ»
 - «Դրամատիկ» թատրոն
 - «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ դպրոց»
 - «Գյումրու գարեջրի գործարան»

- Արթիկի ՀՓՁ – «Հրդեհաշիջումը էներգետիկ և էլ.սարքավորումներ պարունակող հիմնարկներում» թեմայով
 - ք. Արթիկ «ՀԷՑ» ՓԲԸ«Ղարա» մասնաձյուղ 110/35 ենթակայան
 - Արթիկի ԲԿ
 - Արթիկի պետական քոլեջ
 - Արթիկի «Մտեկլումաշ» գործարան ՓԲԸ

- Ամասիայի ՀՓՁ – «Հրդեհաշիջումը ուսումնական հաստատություններում» թեմայով
 - Ամասիայի միջնակարգ դպրոց
 - Ամասիայի արհեստագործական ուսումնարան
 - ՈՂայկ և Տարոն» ՍՊԸ՝ բենզալցակայան
 - Ամասիայի Արվեստի դպրոց

- Անիի ՀՓՁ – «Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը» թեմայով
 - ք. Մարալիկ «Նայթեքս» ԲԲԸ
 - ք. Մարալիկ «Նայթեքս» ԲԲԸ
 - ք. Մարալիկ ՈՄարալիկ - Անի» ՍՊԸ՝ բենզալցակայան

- Աշոցքի ՀՓՁ – «Հրդեհաշիջումը գազալցակայաններում» թեմայով
 - Աշոցքի ՈԲԵՌՆԵԿՅԱՆՈՒ գազալցակայան
 - Աշոցքի միջնակարգ դպրոց
 - Աշոցքի մարզամշակութային կենտրոն
 - Աշոցքի «ՀԷՑ» ՓԲԸ «Ղարա» մասնաձյուղ

- Ախուրյանի ՀՓՁ – «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպում, աշխատակիցների տարահանում և տուժածների դուրս բերումը» թեմայով
 - ՈՍԱքսՀուրժ ՍՊԸ
 - «Մերձմոսկովյան» ԲԲԸ
 - Ախուրյանի թիվ 2 հանր. դպրոց
 - Ախուրյանի Մ. Աղբալյանի անվան ավագ դպրոց

7. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել կադրերի ընտրության ուղղությամբ՝ **2015թ.-ի ընթացքում.**

- ՇՄՓ-ն համալրվել է - 6 ծառայողներով
- ազատվել են ծառայությունից – 22-ը
- պաշտոնի փոփոխություն - 50
- արձակուրդից են օգտվել – 234-ը
- ՃԿՊԱ-ում են վերապատրաստվել – 8-ը
- մերժվել է - 10 գործ
- իրախուսվել են ընդամենը՝ 6 ծառայողներ
 ՀՀ վարչապետի շնորհակալագիր - 1
 ՀՀ ՏԿԱԻ նախարարի շնորհակալագիր - 4
 ՀՀ ՏԿԱԻ նախարարի կողմից մեղալ - 1

Շնորհվել է թվով 62 փ/ծ կոչումներ՝

- Փոխգնդապետ - 1 ծառայող
- Կապիտան - 1 ծառայող
- Ավագ լեյտենանտ – 3 ծառայող
- Ենթասպա – 5 ծառայող
- Ավագ սերժանտ – 12 ծառայող
- Ավագ – 10 ծառայող
- Սերժանտ - 18 ծառայող
- Կրտսեր սերժանտ - 12 ծառայող

2015թ. ընթացքում անցկացվել է թվով 15 խորհրդակցություններ՝

- պետի կողմից արձակվել է թվով 32 ներքին հրամաններ,
- մուտքի փաստաթղթերի քանակը կազմել է 1098, ելքի փաստաթղթերինը՝ 1134:
- Շիրակի ՄՓՎ ընդհանուր համալրվածությունը կազմում է 83,3 %
 ըստ ստորաբաժանումների՝
 - ՇՄՓՎ - 100 %,Գյումրիի ՀՓՋ - 81,3 %,Արթիկի ՀՓՋ - 83,3 %, Անիի ՀՓՋ - 86,1 %,
 - Ախուրյանի ՀՓՋ – 86,1 %,Ամասիայի ՀՓՋ – 80,5 %,Աշոցքի ՀՓՋ – 74,3 %:

8.ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՇՄՓՎ 2015թ -ի կոմունալ ծախսերն են՝

	Հատկացված	Օգտագործված	Գերաձախս	Խնայողություն
Էլ.էներգիա	190700 կվտ	195344	4644	-
Գազ	26900 մ³	27000	100	-
Ջուր	4249 մ³	5509	1260	-

9. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

- ՇՄՓՎ կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է թվով 10 որոշում:

10. ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կողմից իրականացված շինարարական և այլ բնույթի աշխատանքներ

- ՇՄՓՎ նոր շենքի վերակառուցման, վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները մեկնարկել էին 2014 թ. հոկտեմբեր ամսից և ավարտին հասցվել 2015թ. մայիս ամսին:
- Շենքի հարակից տարածքում մոնտաժվել և տեղադրվել է ալեհավաքների համար նախատեսված 12 մ բարձրությամբ աշտարակը :
- 2015 թ. հոկտեմբեր ամսին իրականացվել են շարահրապարակի և ավտոկանգառի շինարարության, շենքի հարակից տարածքի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքները:
- Պարբերաբար թարմացվել և համալրվել է ՇՄՓՎ գրասենյակային գույքը:
- ՃԿԿ-ն համալրվել է համապատասխան նոր գույքով և սարքավորումներով:
- Ամասիայի թիվ 50 ՀՓՋ-ում տեղադրվել են նոր պատուհաններ:
- Արթիկի թիվ 49 ՀՓՋ-ում վերանորոգվել է ավտոտնակի հատակը:

11. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզում արտակարգ իրավիճակների կանխման, իսկ առաջացման դեպքում օպերատիվ արձագանքման, հետևանքների մեղմացման և վերացման աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով առաջարկվում է.

- ՄՓՎ-ի նորաստեղծ ՃԿԿ-ի գործառույթները լիարժեք իրականացման նպատակով համապատասխան հաստիքների հատկացում:
- ՀՓՋ-ների շենք-շինությունների վերանորոգման համար միջոցների հատկացում.
- ՇՄՓՎ բաժիններին և ենթակա ստորաբաժանումներին համակարգիչների, տպիչ սարքերի (Scanner-ների) տրամադրում.
- ՀՓՋ-ներին ժամանակակից հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների հատկացում.
- ՀՓՋ-ներին լեռնափրկարարական գույքի, հիդրավլիկ փրկարարական լրակազմերի տրամադրում:
- Գյումրու թիվ 48 ՀՓՋ-ին ջրափրկարարական գույքի հատկացում:
- ՀՓՋ-ներում առկա ձեռքի ռադիոկայանների թարմացում, հեռադիտակների հատկացում:
- Գրասենյակային, տնտեսական և այլ աշխատանքների իրականացման համար ամսեկան ֆինանսական միջոցների հատկացում.
- ՀՓՋ-ին գրասենյակային կահույքի հատկացում.
- ՄՓՎ ՀՓՋ-ներին դեպքերի օպերատիվ արձագանքման համար ծառայողական մեքենաների հատկացում.
- Աշոցքի թիվ 52 և Անիի թիվ 51 ՀՓՋ-ներին շնչառական ապարատների հատկացում:

Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ,
փ/ծ գնդապետ՝ Մ.Յ. Սարիբեկյան